ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԴՄՆԳ-ԳՀԾՁԲ-20/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «21» փետրվարի 2020թ.

2020թ-ի փետրվարի 20-21-ին, ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 12/3 շենք հասցեում գտնվող «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ՀԴՄՆԳ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Պողոսյան	ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազդեցությունների գնահատման բաժնի գլխավոր հարկային տեսուչ՝ նախագահ. (համաձայնությամբ)
Ի. Մարգարյան	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի հաշվետար՝ անդամ.
Ն. Նարիմանիձե	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի դիմումների ընդունման պատասխանատու՝ անդամ.
Հ. Գուլաբյան	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ քարտուղար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Պողոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Հ. Գուլաբյանը: